Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 1-ի N 626 - Լ որոշման

ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ՖՈՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Համակատարողը	Ակնկալվող վերջնական արդյունքը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	«ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարների արդյունավետ կառավարում, ռեկուլտիվացիոն ֆոնդից անհրաժեշտ դրամական միջոցների նպատակային օգտագործում՝ 1. Իրավահարաբերությունների կարգավորում՝ կապված ընդերքօգտագործման իրավունքների դադարեց-ման գործընթացի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցության/տեղեկացված լինելու ապահովման հետ: 2. Իրավահարաբերությունների կարգավորում՝ նախատեսելով ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման	2018 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:

				թափոնների վերամշակման պլան-ների իրագործման ավարտին շրջակա միջավայրի պահպանու-թյան դրամագլխին հատկացված գումարների վերահաշվարկման մեխանիզմ: 3. Ռեկուլտիվացիոն ֆոնդի արդյունավետ կառավարման և օգտագործման համապատասխան մեխանիզմի սահմանում՝ ընդերքօգտագործման թույլտվությունների ժամկետների ավարտից հետո խախտված հողա-տարածքներում նոր բիզնես-ծրագրերի իրականացման համար:		
2.	«Հայաստանի Հանրա-պետության կառավա-րության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշման մեջ փոփոխու-թյուններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպա-նության նախարարություն	-	շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող վճարների կարգավորում (վերջնական հատկա-ցում), ընդերքօգտագործողին դրամա-գլխից հատկացումներ կատարելու նպատակով՝ լիազոր մարմնի կողմից որոշում կայացնելու գործընթացի պարզեցում, հանքերի փակման ժամանակ խախտված տարածքների վերականգման աշխատանքների ֆինանսավորման ապահովում	2019 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.	«Ընդերքօգտագործման	ՀՀ բնապահպա-	-	ընդերքօգտագործման արդյունքում	2020 թ.	ՀՀ օրենքով

	արդյունքում խախտված հողերի կենսաբանական վերականգնման իրա-կանացման ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	նության նախարարություն		խախտված հողերի կենսաբանական վերականգնման ուղեցույց	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ ֆինանսա-վորման առկայության դեպքում	չարգելված այլ միջոցներ
4.	«Ռեկուլտիվացիոն աշխա-տանքների նախահաշ-վային արժեքների հաշ-վարկման և վերահաշ-վարկման կարգը հաս-տատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ բնապահպա-նության նախարարություն	-	ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշ-վարկման հստակեցում՝ իրավահա-րաբերությունների կարգավորում	2020 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ («ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում փոփոխու-թյուններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո)	Ֆինանսավորում չի պահանջվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ